բաւն կայ վասն երկուցանելոյ զլսօղսն եւ այլ տեղաց օգնութիւն ոչ ունին։ Այլ զօրացիր եւ քաջ լեր շընորհօքն Քրիստոսի ընդէմ թշնամեաց քոց, հայր սուրբ, զի ահա չԱկոր Կաթողիկոսն զիւր եղբօր որդի Մանուէլն սուրբ Սարգսի Պահոցն յղեաց առ Փապին Ֆռանկաց, բազում նշխարք առնելով ընդ իւր՝ զՀռիփսիմեանցն, զԳայիանեացն եւ զնախավկային, եւ այլ բազում նշխարք ընծայ Փապին, զի եւ նա բազում գանձս տացէ նմա, եւ սա նաւեալ գնասցէ ի Վրաց տուն, եւ զՄանըվէլն օծեսցէ թագաւոր Հայոց, ահա երկարնակութիւն սորա, որ ծածկեալ ունէր ի սրտի իւրում ի ձեռն Ոսկան վարդապետին միաբանութեամբ Փապին կատարեաց, զո՞վ հրաշալին բարձին, զի Բ(2) հազար շարակնոց պատմայ (տպագրել) են տուեր Ոսկանն, Գ (3) շարակնոց բերին Իզմիր տեսան որ ո՞վ հրաշալին չկայր, Ա. (1) շարակնոցն իւրեանց հետն տարին յԵրուսաղէմ եւ մէկ էջմիածին զրկեցին, եւ Ա. (1) այստեղ վաճառականաց մէջն է, մինչեւ ի Սուրբ Խաչ բովանդակ կուգայ, որ ամենէքեան աչօք իւրեանց տեսանեն զմոլորեալ գործն չԱկորին եւ դայթակղութիւն ժողովրդեան եւ թերութիւն հաւատոցն, հայր սուրբ, զի եւ մեզ բազում վիշտ եւ նեղութիւն հասոյց անիծեալ չԱկորն, վասնզի, վասն ագահութեան իւրոյ յղեաց զմեզ ուրեք անյայտ տեղիս շրջել եւ իւր պաշար հաւաքել, եւ մեք շրջեցաք եւ բերեալ Իզմիր վկայական գրով զամէն յանձնեցաք յինքն, եւ նա ոչինչ համարելով զայնօք աշխատանքն մեր, եւ զմեզ յետս ձգեալ ի տեղս, եւ ոչ ետ պատասխանի, եւ ի ճանապարհին չաւուշի (բարապանի) փուշտ (սրիկայ) տղայի խօսքով կու ելանէ Ա. (1) թուղթ կու գրէ ի վերայ վիճակացն թէ այսչափ ստակ է գողացեր, ի ձեզ մատնեցի, տէր դատաստան դուք արարէք։ Եւ յորժամ թուղթն ի սոցա ձեռն եհաս իբրեւ անօրէն գազան յարեան ի վերա իմ, զոր ինչ ունէի առին յինէն, մերկ ի մօրէ արարեալ՝ զիս եւ թողին, եւ ես խեղճ մնացի, այլ կամ մնամ ողորմութեան աստուծոյ, եւ ի սուրբ հայրդ աղաչեմ ապաւինելով զի ձեռն տացես անկելոյս եւ խորտակելոյս··· զի ուր եւ գնամք ընդունին զմեզ եւ քարոզեմք զանաստուած գործս նոցա զոր հատուցին առ սուրբ տունն աստուծոյ դատաստանի եւ ի սուրբ հայրդ· անխտիր զչարութիւնս իւրեանց անպատկառ ի մարդկանէ։ Այլ որպէս հաճոյ թուի Տեառնդ վասն իմ՝ բարի է ինձ եւ կամ հոգւով եւ մարմնով հնազանդ մահու չափ։ Ողջ լիցի տէրդ մեր եւ հանուրց՝ ըստ ամենայնի յաջողմամբ ի պարծանս մեր եւ մերոյ ազգի ամենայնի շնորհօք սրբոյն զարդարողի էիցս, ամէն։ Հա՛յր սուրբ, Ստեփաննոսն այս տեղս իմfար (ուրացաւ) արար զիւր տված թամասուրքներն (վկայութիւնները), խոճա Պաղտասարին Ատոմին բանին համար պատճառեաց՝ թէ Եղիազարի քովն գնաց, վասն այն ես իմfար արարի (ուրացայ), այլ յորժամ գնացին ի Մարմարիա յետ հոգեւոր տիրոջն, ինքն խոստովաներ էր նորա՝ թէ վասն գնալոյ նորա ես իմfար արարի (ուրացայ), ապա ճշմարիտն խոճա Պաղտասարն է եւ Ատոմն՝ սուտ։ Ահա հոգեւոր տէրն մէկ օրհնութեան թուղթ էր առաքել Պաղտասարին՝ թէ քո բանն ճշմարիտ է եւ Ատոմին՝ սուտ, եւ այլ բազում բանս գրեալ կայր։ Գրեցաւ թվին ՌՃԺԵ (1666)։»

Այս երկու նամակներուն հեղինակը Ղըլմպիկ կոչուած Սահակ վարդապետն է։ Զինքը կոչած են նաեւ ՊԶՏԻԿ կամ ՊԶՏԻ Ղըլմպիկ հաւանաբար անոր համար որ իրեն ժամանակակից կար Ղազար Ղըմպիկ մըն ալ Եղիազարեան կուսակցութեան մէջ։ Ինչո՞ւ Ղըմպիկ կոչուած են չենք գիտեր։ Ամէն պարագայի տակ, ժամանակագրական տեսակէտէն իրարմէ ոչ շատ հեռու վերի երկու նամակները, մին՝ Յակոբ Դ.ին, եւ միւսը՝ Եղիազարին, նոյն նամակագիր Ղըմպիկ Սահակէն, լաւ չեն խօսիր նամակագրին նկարագրին մասին։ Յակոբ Դ.ի նամակին մէջ ուրիշները կ'ամբաստանէ իբրեւ երկարնակ, իսկ Եղիազարի գրած նամակին մէջ ուղղակի Յակոբ Դ.ը կը ներկայացնէ իբրեւ երկարնակ Հռոմէադաւան։ Բնական է որ արժանահաւատ աղբիւր կարելի չէ նկատել պարսաւող,